«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 10.12.2025 թ. թիվ 1348 Ն/Մ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից
Արձանագրություն թիվ 5 29.06.2017թ.
Փոփոխվել է՝
Արձանագրություն թիվ 5 29.04.2021թ.
Առ 04.05.2021թ.փոփոխություններով
Արձանագրություն թիվ 2 23.09.2021թ.
Առ 29.09.2021թ.փոփոխություններով
Արձանագրություն թիվ 14 30.05.2024թ.
Առ 03.06.2024թ.փոփոխություններով
Արձանագրություն թիվ 3 26.11.2025թ.
Առ 10.12.2025թ.փոփոխություններով

Վանաձոր

2025թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) գիտական խորհրդի կազմի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգը:

2. Համալսարանի գիտական խորհուրդը (այսուհետ՝ Գիտխորհուրդ) լուծում է Համալսարանի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության կազմակերպման, պլանավորման և կառավարման հիմնահարցերը:

3. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են «Նորմատիվ իրավական ակտերի մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, Համալսարանի կանոնադրությունը:

4. Սույն կանոնակարգում փոփոխությունները կատարվում են ՎՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

(4-րդ կետը լրաց., 29.09.21 Հրաման 969 Ն/Մ)

II. ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

5. Գիտխորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Համալսարանի ռեկտորը (Գիտխորհրդի նախագահ), պրոռեկտորները, գիտական քարտուղարը (Գիտխորհրդի քարտուղար), գլխավոր հաշվապահը, իրավաբանը, ֆակուլտետների դեկանները, Համալսարանի ռեկտորի (այսուհետ՝ Ռեկտոր) նշանակմամբ՝ այլ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, ինչպես նաև ընտրովի անդամներ՝ սույն կանոնակարգին համապատասխան:

5.1. ՎՊՀ ամբիոնները վճռական ձայնի իրավունք ունեցող պրոֆեսորադասախոսական կազմից ամբիոնի նիստին առաջադրում են ամբիոնից ներկայացվող ՎՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամության թեկնածուներ, որոնցից մեկն ընտրվում է՝ փակ, գաղտնի քվեարկությամբ: Ընտրված է համարվում քվեարկությանը մասնակցողների ձայների պարզ մեծամասնությունը ստացած թեկնածուն:

Ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատում է ամբիոնի ընտրության արդյունքները:

5.2. ՎՊՀ ամբիոնները վճռական ձայնի իրավունք ունեցող պրոֆեսորադասախոսական կազմից ամբիոնի նիստին առաջադրում են ՎՊՀ գիտական խորհրդի ընտրովի անդամության ֆակուլտետից ներկայացվող մեկ (մեկ) անդամի թեկնածություն:

Ամբիոններից առաջադրված թեկնածուները ընտրվում են Ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում փակ, գաղտնի քվեարկությամբ:

Ընտրված է համարվում քվեարկությանը մասնակցողների ձայների պարզ մեծամասնությունը ստացած թեկնածուն:

(5-րդ կետը փոփ. 04.05.21 Հրաման 300 Ն/Մ, 5.1 լրաց., փոփ., 29.09.21 Հրաման 969 Ն/Մ, 5.2 լրաց.,փոփ., 29.09.21 Հրաման 969 Ն/Մ)

6. Եթե Գիտխորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվող անձը Համալսարանի հոգաբարձուների խորհրդի անդամ է, ապա Ռեկտորը կարող է նրա փոխարեն նշանակել այլ անձի՝ տվյալ կառուցվածքային ստորաբաժանումից:

7. Գիտխորհրդի կազմը հաստատվում է Ռեկտորի հրամանով: Գիտխորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 40-ը, որի առնվազն 50 տոկոսն ընտրովի անդամներն են:

8. Գիտխորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումն իրականացնում է համապատասխան ուսանողական խորհուրդը, իսկ ընտրությունն իրականացնում է Համալսարանի ուսանողական խորհուրդը՝ իր կանոնադրությամբ սահմանված կարգով:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Գիտխորհուրդը Ռեկտորի նախագահությամբ գործող՝ համալսարանի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և գիտատեխնիկական գործունեությունը համակարգող ու կարգավորող կոլեգիալ կառավարման մարմին է: Գիտխորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

10. Գիտխորհուրդը՝

1) հաստատում է իր կանոնակարգը.

2) Ռեկտորի ներկայացմամբ՝ հոգաբարձուների խորհրդին ներկայացնում է առաջարկություն կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմակերպելու, լուծարելու վերաբերյալ.

3) հատկացված ընդհանուր չափաքանակների շրջանակներում քննարկում և ընդունում է որոշումներ Համալսարանի՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտությունների ընդունելության վերաբերյալ.

4) հաստատում է կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները (այդ թվում՝ օրինակելի), Համալսարանի և կառուցվածքային ստորաբաժանումների հիմնական գործունեությունը և ուսումնական գործընթացը կանոնակարգող այլ ներքին իրավական ակտեր.

5) քննարկում և հաստատում է կրթական ծրագրերը, ըստ մասնագիտությունների սահմանում է վճարաչափերը.

6) քննարկում է գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները, լսում գիտական հաղորդումներ Համալսարանում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.

7) ընդունում է պատվավոր կոչումներ շնորհելու, մրցանակներ, անվանական և այլ կրթաթոշակներ տալու, Համալսարանի շքանշանով և մեդալով պարգևատրելու, հանրապետական ու միջազգային պարգևների և կոչումների համար թեկնածություններ ներկայացնելու, լսարաններ, ստորաբաժանումներ, անկյուններ անվանակոչելու մասին որոշումներ.

8) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի ընտրությունների ընթացակարգերը.

9) անցկացնում է ամբիոնների վարիչների և պրոֆեսորների թափուր պաշտոնների տեղակալման մրցույթներ.

(10-րդ կետի 9-րդ ենթակետը փոփոխվել է 03.06.2024թ. Հրաման թիվ 440 Ն/Մ)

10) շնորհում է գիտական կոչումներ, հաստատում ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորների թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները.

(10-րդ կետի 10-րդ ենթակետը փոփոխվել է 03.06.2024թ. Հրաման թիվ 440 Ն/Մ)

11) Համալսարանի գործունեության բնագավառներին, նպատակներին և խնդիրներին համապատասխան լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ Համալսարանի գործունեության հիմնական ուղղությունների, այդ թվում՝ նոր մասնագիտություններով կրթական ծրագրեր իրականացնելու վերաբերյալ.

12) Ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ Համալսարանի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի նախագծի վերաբերյալ.

13) քննարկում է հանրապետության հասարակական, քաղաքական, կրթական, գիտական և մշակութային կյանքին ու կարևորագույն իրադարձություններին վերաբերող խնդիրներ, ըստ անհրաժեշտության ընդունում է հայտարարություններ.

14) քննարկում և հրատարակության է երաշխավորում մենագրություններ, դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ժողովածուներ և այլ նյութեր.

15) ըստ անհրաժեշտության ստեղծում է Գիտխորհրդին կից գործող մշտական կամ ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը և գործունեության ժամկետը.

(15)-րդ կետը լրաց. 04.05.21 Հրաման 300 Ն/Մ)

16) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և Համալսարանի կանոնադրությունից բխող այլ լիազորություններ:

11. Գիտխորհրդի նիստը համարվում է իրավազոր՝ նրա անդամների 2/3-ի ներկայության դեպքում: Որոշումներն ընդունվում են Գիտխորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, եթե այլ որոշում չի ընդունվում:

(11-րդ կետը փոփ. 10.12.25թ. Հրաման 1348 Ն/Մ)

IV. ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Գիտխորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով: Գիտխորհրդի նիստերը գումարվում են ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ:

13. Գիտխորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել Գիտխորհրդի նախագահի առաջարկով, ինչպես նաև Գիտխորհրդի անդամների առնվազն 1/3-ի պահանջով: Գիտխորհրդի նախագահն արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ գիտխորհրդի անդամների պահանջն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում պարտավոր է ապահովել նիստի գումարումը:

ՎՊՀ գիտական խորհրդի նիստերը կարող են անցկացվել առկա, հեռավար կամ համակցված (առկա ու հեռավար զուգակցմամբ) եղանակով՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության այլ միջոցների կիրառմամբ, ինչպես նաև գրավոր հարցման միջոցով:

(13-րդ կետը փոփ. 10.12.25թ. Հրաման 1348 Ն/Մ)

14. Գիտխորհրդի նիստերը նախապատրաստում և օրակարգը ձևավորում են Ռեկտորը և Համալսարանի գիտական քարտուղարը: Գիտխորհրդի օրակարգը ձևավորվում է ըստ հաստատված պլանի և գրավոր առաջարկությունների: Առաջարկություններն օրակարգում չներառելու դեպքում Գիտխորհրդի նախագահը 2-օրյա ժամկետում գրավոր հիմնավորում է տրամադրում առաջարկող կողմին:

Գիտական խորհրդի նախագահը կարող է առաջարկել նիստի օրակարգում ընդգրկել հրատապ հարցեր, որոնց՝ օրակարգում ընդգրկման գործընթացը սահմանված կարգով դրվում է քվեարկության:

(14-րդ կետը փոփ. 10.12.25թ. Հրաման 1348 Ն/Մ)

15. Գիտխորհրդի քարտուղարը Գիտխորհրդի նիստ (հերթական կամ արտահերթ) հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր ծանուցում է Գիտխորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ, արտահերթ նիստի անցկացման օրվանից՝ առնվազն 1 օր առաջ: Գիտխորհրդի տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ փաստաթղթային փաթեթը (զեկուցումների, որոշումների նախագծեր, տեղեկանք-հիմնավորումներ և այլն) տեղադրվում է համակարգչային ներքին ցանցում՝ վարչական>գիտ.թղթապանակ> Գիտխորհուրդ) նիստից առնվազն 5 օր առաջ: Առաջարկները գրավոր ներկայացվում են Գիտխորհրդի քարտուղարին Գիտխորհրդի նիստից առնվազն 2 օր առաջ, որոնք տեղադրվում են ներքին ցանցում:

(15-րդ կետը փոփ. 10.12.25թ. Հրաման 1348 Ն/Մ)

16. Առաջարկ ներկայացնողները Գիտխորհրդի նիստից 2 օր առաջ իրավաբանի, իսկ տվյալ հարցով հանձնաժողով կամ աշխատանքային խումբ ստեղծված լինելու դեպքում՝ նրանց հետ, քննարկում են բոլոր առաջարկները: Փաստաթղթի վերջնական տարբերակը պետք է տեղադրվի համակարգչային ներքին ցանցում Գիտխորհրդի նիստի նախորդ օրը:

(16-րդ կետը փոփ. 04.05.21 Հրաման 300 Ն/Մ)

17. Գիտխորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը նիստն սկսվելուց առաջ: Քվորում չլինելու դեպքում նիստը հետաձգվում է:

18. Գիտխորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:

19. Ռեկտորը, բացելով Գիտխորհրդի նիստը, փաստում է քվորումի առկայությունը և քվեարկության դնում նիստի օրակարգը:

20. Գիտխորհրդի անդամները կարող են առաջարկել նիստի օրակարգի հարցերի հերթականության փոփոխություն՝ զեկուցող(ներ)ի համաձայնության դեպքում կամ օրակարգից հանել հարցեր, որոնք սահմանված կարգով դրվում են քվեարկության:

(20-րդ կետը փոփ., լրաց. 04.05.21 Հրաման 300 Ն/Մ)

21. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է Գիտխորհուրդը՝ Գիտխորհրդի նախագահի առաջարկությամբ:

22. Գիտխորհրդի և Գիտխորհրդի նախագահի որոշմամբ անհրաժեշտության դեպքում նիստին կարող են խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցել հրավիրյալ անձինք, այդ թվում՝ փորձագետներ՝ համապատասխան խորհրդատվության համար:

23. Գիտխորհրդի նախագահը.

1) վարում է Գիտխորհրդի նիստը,
2) հաստատման է ներկայացնում Գիտխորհրդի աշխատանքային պլանը՝ ըստ ուսումնական տարվա կիսամյակների,
3) սահմանում է ժողովակարգը,
4) սահմանում է ելույթների հերթականությունը՝ ըստ օրակարգի,
5) ներկայացված առաջարկությունները դնում է քվեարկության՝ ըստ հերթականության,
6) կազմակերպում է քվեարկությունը և ձայների հաշվառումը,
7) ապահովում է Գիտխորհրդի որոշումների կատարումը,
8) կազմակերպում է Գիտխորհրդի աշխատանքները:

24. Գիտխորհրդի բոլոր անդամները պարտավոր են մասնակցելու Գիտխորհրդի նիստերին: Իր մասնակցելու անհնարինության դեպքում Գիտխորհրդի անդամը պարտավոր է տեղեկացնել Գիտխորհրդի նախագահին կամ գիտական քարտուղարին:
Գիտական խորհրդի հերթական նիստից երկու և ավելի անգամ անհարգելի բացակայող գիտխորհրդի անդամի անդամության հետագա շարունակման նպատակահարմարության հարցը ՎՊՀ գիտխորհրդի նախագահի առաջարկով քննարկման է դրվում գիտխորհրդի անդամին առաջադրող համապատասխան մարմնում:
(24-րդ կետը փոփ., լրաց. 11.06.25 թ. Հրաման 535 Ն/Մ)

25. Գիտխորհրդի նիստում նախատեսվում են հրապարակային խոսքի հետևյալ տեսակները՝ զեկուցում, հարակից զեկուցում, ելույթ, հաղորդում: Գիտխորհրդի անդամը տվյալ նիստում նույն հարցի վերաբերյալ ելույթ է ունենում մեկ անգամ:

26. Գիտխորհրդի ներկա անդամների մեծամասնության համաձայնությամբ նախագահողը որոշում է օրակարգի հարցի քննարկման, հարցերի և պատասխանների ընդհանուր ժամանակը՝ անհրաժեշտության դեպքում երկարացնելով այն:

27. Գիտխորհրդի անդամները ելույթ են ունենում ամբիոնից կամ դահլիճում իրենց զբաղեցրած տեղից:

28. Սահմանված ժամանակում ելույթը չավարտելու դեպքում ելույթ ունեցողի խնդրանքով Գիտխորհուրդը կարող է նրան տրամադրել լրացուցիչ ժամանակ:

29. Չի թույլատրվում ելույթներում գործածել վիրավորական արտահայտություններ:

30. Ոչ ոք իրավունք չունի առանց նախագահողի կամ Գիտխորհրդի թույլտվության ելույթ ունենալու:

31. (հոդվածն ուժը կորցրել է 29.09.21 Հրաման 969 Ն/Մ)

32. Քննարկվող հարցի վերաբերյալ մտքերի փոխանակումը կարող է դադարեցվել սահմանված ժամանակի սպառմամբ կամ Գիտխորհրդի որոշմամբ:

33. Գիտխորհրդի նիստին քննադատվողները են իրավունք ունեն պատասխան խոսքով հանդես գալու:

V. ԳԻՏԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

34. Գիտխորհրդի որոշումներն ընդունվում են նիստում բաց կամ փակ (գաղտնի) քվեարկությամբ: Փակ (գաղտնի) քվեարկությունը իրականացվում է քվեաթերթիկներով:

35. Բաց քվեարկության յուրաքանչյուր հարցի կապակցությամբ Գիտխորհրդի յուրաքանչյուր անդամ ունի ձայնի միայն մեկ իրավունք՝ քվեարկելու «կողմ», «դեմ», «ձեռնպահ»:

36. Գիտխորհրդի անդամն անձամբ է իրականացնում իր ձայնի իրավունքը: Քվեարկությանը իրավունք ունեն մասնակցելու միայն Գիտխորհրդի նիստին ներկա անդամները:

37. Քվորումի բացակայության դեպքում նախագահողը քվեարկությունը տեղափոխում է հաջորդ նիստ:

38. Բաց քվեարկությունն անցկացվում է ձեռք բարձրացնելով: Ձայների հաշվառումը կատարում է նախագահը կամ հաշվիչ հանձնաժողովի անդամները:

39. Ձայները հաշվելուց հետո Նախագահողը հայտարարում է որոշման ընդունման մասին:

40. Քվեարկության ընթացակարգի խախտումների դեպքում Գիտխորհրդի որոշմամբ կատարվում է կրկնակի քվեարկություն:

41. Բաց քվեարկությունից առաջ նախագահողը հայտարարում է քվեարկության դրվող առաջարկությունների քանակը՝ ճշտելով նրանց ձևակերպումները և հաջորդականությունը:

42. Քվեարկությունն սկսելուց հետո ոչ ոք իրավունք չունի ընդհատելու այն՝ բացի վարման կարգի վերաբերյալ հայտարարություններից:

43. Գաղտնի քվեարկությունն անցկացվում է տվյալ պաշտոնը մրցութային կարգով զբաղեցնելու և գիտական կոչումներ շնորհելու դեպքում՝ համաձայն «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման» կանոնակարգի և ՀՀ կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի»:

VI. ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

44. Գիտխորհրդի որոշումները կիրարկվում են Ռեկտորի հրամաններով:

45. Ռեկտորն իրավասու է կասեցնելու Գիտխորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը, Համալսարանի կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերի:

46. Գիտխորհրդի այն որոշումները, որոնք Ռեկտորի կողմից կասեցվել են ընդունման ընթացքում ընթացակարգային խախտումների պատճառով, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության Գիտխորհրդի նույն կամ այլ նիստում:

47. Գիտխորհրդի որոշումների կասեցման մասին Ռեկտորի հրամանները պետք է լինեն հիմնավոր և պատճառաբանված:

VII. ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

48. Գիտխորհրդի նիստերն ձայնագրվում, արձանագրվում են և համարակալվում: Յուրաքանչյուր ուսումնական տարի սկսվում է նոր համարակալում: Նիստերի արձանագրությունը կազմում է գիտական քարտուղարը Գիտխորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ժամկետում: Արձանագրությունը ստորագրում են Գիտխորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:

49. Արձանագրության մեջ նշվում են նիստի անցկացման ամսաթիվը, նախագահը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքները և Գիտխորհրդի կողմից ընդունված որոշումները:

Գիտխորհրդի քարտուղարը պատասխանատվություն է կրում արձանագրության ամբողջականության, օբյեկտիվության և ճշգրտության համար:

(49-րդ կետը լրաց. 04.05.21 Հրաման 300 Ն/Մ)

VIII. ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

50. Հանձնաժողովների կազմում ընտրվում են Գիտխորհրդի անդամներ, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագետներ, ստորաբաժանումների աշխատակիցներ և ուսանողներ:

51. Հանձնաժողովների խնդիրն է՝ իրենց կանոնակարգման ոլորտի հարցերի ուսումնասիրումը, նախապատրաստումը և դրանց վերաբերյալ Գիտխորհրդին առաջարկության ներկայացումը:

52. Հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ և քարտուղար: Ուսանողները չեն կարող լինել հանձնաժողովի նախագահ: Առաջին նիստը վարում է տարեց անդամը, արձանագրում՝ երիտասարդ անդամը:

(52-րդ կետը փոփ. 04.05.21 Հրաման 300 Ն/Մ, Հրաման 969 Ն/Մ)

53. Հանձնաժողովներն իրենց ոլորտին վերաբերող հարցերը քննարկում են Գիտխորհրդի և/կամ Ռեկտորի հանձնարարությամբ:

54. Հանձնաժողովների նախագահներն իրավասու են Ռեկտորին գրավոր դիմելու Համալսարանի ստորաբաժանումներից ստանալու անհրաժեշտ փաստաթղթեր ու նյութեր, որոնք վերաբերում են հանձնաժողովի ուսումնասիրման կամ կանոնակարգման ոլորտին:

55. Հանձնաժողովի նիստն իրավազոր է հանձնաժողովի անդամների առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:

56. Հանձնաժողովների որոշումները և եզրակացությունները հաստատվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ և ունեն խորհրդատվական բնույթ:

Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

(56-րդ կետը փոփ. 10.12.25թ. Հրաման 1348 Ն/Մ)

57. Հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն հանձնաժողովում քննարկված հարցերի վերաբերյալ ունենալու հատուկ կարծիք և այն արտահայտել եզրակացության մեջ:

58. Հանձնաժողովների լիազորությունները դադարեցվում են Գիտխորհրդի որոշմամբ:

59. Կատարած աշխատանքների վերաբերյալ մշտական հանձնաժողովն ուսումնական տարվա վերջում հաղորդում է ներկայացնում Գիտխորհրդին:

(59-րդ կետը լրաց. 04.05.21 Հրաման 300 Ն/Մ)

IX. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

60. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում ՎՊՀ ռեկտորի կողմից հաստատվելուց հետո:

61. Կանոնակարգով չնախատեսված դեպքերը կարգավորվում են ՎՊՀ Կանոնադրությամբ և ՀՀ իրավական ակտերով սահմանված կարգով: